ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 192 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ու 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ և 2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 1062-Ն որոշումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված պիլոտային կարգով հաշվարկած խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի 1-ին կիսամյակի վերջին օրվա դրությամբ փաստացի աշխատած ղեկավար անձանց:

2. Խրախուսման ֆոնդից պարգևատրման բաշխումն իրականացնել համապատասխան պաշտոնատար անձանց անհատական իրավական ակտերի

3. Սահմանել, որ սույն որոշմամբ խրախուսանքի արժանացած անձին տրված պարգևավճարի 10 տոկոսը, իսկ վերջինիս մեծությունը 250 հազար դրամը գերազանցելու դեպքում՝ 250 հազար դրամը, նախատեսված է վճարման կիսամյակին հաջորդող կիսամյակի ընթացքում կրթության կամ գիտական գործունեության հետ կապված, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հրապարակումների (այսուհետ՝ կրթության) նպատակով ծախսերի համար: Կրթության նպատակով ստացված միջոցների գծով ծախսերը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու դեպքում այդ մասը ենթակա է նվազեցման հաջորդող ժամանակահատվածի խրախուսման ֆոնդից:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639 **Վ. ԱՐՍԵՆՅԱՆ**

2026 թվականի հուլիսի 30

ք. Եղեգնաձոր